



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 1524 - 66/Թ

<<18 >> 10 2010թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ N 4 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 1-ԻՆ
ԱՍՏԻՃԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԻ
ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010Թ. ՀՈՒՆԻՍԻ 7-
Ի N 786-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ
մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի «ՀՀ կրթական ծրագրերի
իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական
կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և ՀՀ
կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու
մասին» N 808-Ն որոշմամբ հաստատված «Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան
կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգի» 8-րդ կետի պահանջներով
և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի
լիցենզավորման վարչության եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ճամբարակ քաղաքի N 4 միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան կրթական
ծրագրով՝ առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային տեղերի 18 թիվը փոխարինել
72-ով և այդ կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. հուլիսի
7-ի N 786-Ա/Ք հրամանում «<18>> թիվը փոխարինել «<72>>-ով:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Մ.Մովսիսյանին:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:



Ա.ԱՇՈՏՅԱՆ